

Հայ լեզու, բանասէր, եւ բանիբուն Աստուածաբան
 Ի Պատրի Յակօբ Ախլօթէ Ի կարգէն Յիսուսեանց.
 որ բազում աշխատութեամբ, եւ ողորմութեամբն
 Աստուծոյ յաւարտ է հասուցեալ, եւ մեր ընթեր-
 ցեալ կրկին, եւ երեքկին. Գտի անպակաս, եւ
 անսղալ Ի Հայ լեզուով, ոչ թէ միայն Ի
 Հայ լեզուով եւ բառով, այլ եւ ոչ ունի
 Ինչ հակառակ հաւատոյ եւ ողջամիտ վարդա-
 պետութեան, բայց առաւել պարզ եւ հեշտա-
 լուր ոճիւ մեկնէ ամենայն դժուարութիւնս
 սրբոյ Աւետարանին, զառակս, եւ սքանչելագոր-
 ծութիւնս կենաց եւ մահուան Տեառն մերոյ
 Յիսուսի Քրիստոսի. նա եւ լուծանէ զամենայն վի-
 ճաբանութիւնս որք Ի մէջ Հայոց Ի վերայ իրացն
 հաւատոյ, եւ տայ հաստատութիւն վկայութեամբք
 Հայ գրոց, եւ Ի բազում տեղիս Ի կիր առնու զօգ-
 տակար խրատս, եւ ուսմունս վասն հաւատոյ, եւ
 ուղղութեան վարուց: Ուստի յայտ իսկ է որ ազգս
 հայկազեան զտաժանեալս բանսարկուին խաբմամբ,
 ցրուեալս ընդ երեսս երկրի իբրեւ զփոշի հոսեալ
 մեղացն հողմով յազգս այլասեռս, եւ ոչ ունին
 տպարան եւ վարժարան, եւ ոչ գոյ յուստեքէ օգ-
 նութիւն, բայց Ի Տեառնէ, եւ ձերն հայրագութ
 խնամքն, եթէ ոչ երթիցէ այգպիսի ծաղիկ Ի մեծէ
 բուրաստանէս, եւ կաթիլ մի ջուր Ի համատարած
 ծովէս, եւ զովացուցէ զնոսս, եւ հոտոտեսցնն Ի
 հոտից անուշից սրբոյ եկեղեցւոյն, ոչ միայն եկե-
 ղեցականաց է օգուտ, այլ եւ ուամիկ ժողովրդա-
 կանաց յոյժ եւ յոյժ օգուտ է. որ հեշտալուծ
 ընթեռնուն, եւ Ի միտ առնուն, եւ եղեցին հաս-
 տատ Ի վերայ ուղղափառ հաւատոյ:

Ես Նուաստ ամենից ծառայ

Յովակիմ Արհեսպիսկոպոս

Ջուղայեցի: